ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2016

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ
ԵՎ
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՛ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

Ա մակարդակ

1 **Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում *յ*.**

1) Նա-իրի, սկեսրա-ր, երեխա-ի, աղյուս-ակ
2) խնա-ել, հետի-ոտն, ջղա-ին, աշխու-ժ
3) տու-ժ, հեռակա-ել, է-ական, արքա-որդի
4) ատամնաբու-ժ, Սերգե-ի, հա-ելազարդ, լռելյա-ն

2 **Ո՞ր շարքի բոլոր բառերի բաղադրիչներն են գրվում գծիկով.**

1) ունեցած (չունեցած), ուսանող (ուսանողուհի), վառ (նարնջագույն), ստորակետ (գիծ)
2) սուս (փուս), ջրմուղ (կոյուղի), պատեհ (անպատեհ), չորս (միլիոն)անոց
3) ալ (կարմիր), քաշել (մոտեցնել), ուրախ (զվարթ), տալ (առնել)
4) (Տեր) Ավագյան, քաշել (քաշքշել), քաղաք (ամրոց), փայել (փայփայել)

3 **Ո՞ր շարքի բոլոր բառերի (բառակապակցությունների) մեջ փոքրատառով գրվող բաղադրիչ կա.**

1) ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ԱՐԾՐՈՒՆՅԱՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂՈՑ, ԳԻՏԵԼԻՔԻ ՏՈՆ, ՎԵՐԻՆ ԿԱՐՄՐԱՂԲՅՈՒՐ
2) ԵՐԵՎԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ, ԿՈՍԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ, ՀԻՊՈԿՐԱՏԻ ԵՐԴՈՒՄ, ՁԻԹԵՆՅԱՑ ԼԵՌ
3) ՄԻԿԼՈՒԽՈ ՄԱԿԼԱՅ, ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑԻ, ԱՐԱՄ ՏԻԳՐԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ, ՍԱՀԱՐԱՅԻ ԱՆԱՊԱՏ
4) ՖՈՒՏԲՈԼԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԼՅՈՒԴՎԻԳ ՎԱՆ ԲԵԹՀՈՎԵՆ, ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿԻՐՃ

4 **Տրված բառերից քանիսո՞ւմ մեկից ավելի հնչյունափոխություն կա.**

բրդատվություն, մատենագրություն, բնութագրական, ծննդյան, դստրիկ, չվացուցակ, միջնորմ, պատվախնդրորեն, քննաշրջան, հանդգնել:

1) բոլորում
2) հինգում
3) յոթում
4) ութում

5 **Տրված բառերից քանի՞սն են հոմանիշ *դաժան* բառին.**

սինլքոր, անագորույն, ամբարտավան, ժանտ, դժնի, դժկամ, դժխեմ, բիրտ, անողորմ, դժոխալուր:

1) վեցը
2) բոլորը
3) ութը
4) յոթը

6 **Ո՞ր նախադասության մեջ փոխաբերաբար գործածված բառ *չկա:***

1) Բնության գեղեցկությունը կախարդել էր մեզ:
2) Այդ դառը խոսքերը խայթեցին նրան:
3) Դանդաղ քայլում է հռչակավոր բանաստեղծը:
4) Հեծյալը քարացավ իր ձիու վրա:

7 **Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:**

1) Ուսուցչուհին դրվատեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած ներհուն աշակերտներին:
2) Ասպնջական ընտանիքում միշտ էլ հաճելի է հյուրընկալվելը:
3) Հորեղբայրս հայտնի որսորդ է, սակայն վերջերս խիստ զբաղված լինելու պատճառով արդեն ստեպ-ստեպ է գնում որսի:
4) Կատակերգության երկրորդ տեսիլը ամենահաջողվածն էր և գերեց բոլորին:

8 **Տրված բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ -*ատ* վերջածանցը և նոր բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).**

գանգամաշկ, կիսամյակ, հաստաբուն, ամրակուռ, կավածեփ, քնաթաթախ, ապիկար, ձյունափայլ, արևավառ, հոգեառ:

1) հինգի
2) երեքի
3) իննի
4) ութի

9 **Ո՞ր շարքում հոգնակի թվի կազմության սխալ կա:**

1) նյութամոլներ, մարզադաշտեր, սպունգներ, լուսամուտներ
2) կոնյակագործներ, գազամուղներ, դաշույններ, խտանյութեր
3) գործատերեր, նշագեղձեր, կողմնացույցներ, լեզվաբաններ
4) աստղագետներ, ոտնաձայններ, որմնասյուներ, արծվաբներ

10 **Տրվածներից քանի՞սը գերադրական աստիճանով դրված ածականներ *չեն.***

ամենագեղեցիկ, ամենաշնորհ, ամենամեծ, ամենախոր, ամենավատ, ամենահուզիչ, ամենաջերմ, ամենափոքր, ամենասեղմ, ամենատես:

1) ոչ մեկը
2) մեկը
3) երկուսը
4) երեքը

11 **Նախադասություններից քանիսո՞ւմ ներգործական սեռի բայ կա:**

- Ուսումնատենչ երիտասարդները օտար համալսարաններում էին մեղմացնում իրենց ուսման ծարավը:
- Այս թանկագին ձեռագիրը մեզ է հասել հազարամյա պատմության խորքերից:
- Նախորդ դարերում այս ու այնտեղ առկայծած որմնանկարչությունը փթթեց Տաթևում և Անիի տաճարներում:
- Կան նաև ուրիշ հանգամանքներ, որոնք հիմնավորապես մերժում են Գլաձորը Թանահատում տեղադրելու վարկածը:

1) երեքում
2) չորսում
3) մեկում
4) երկուսում

12 **Ո՞ր տարբերակում ենթադրական եղանակի բայաձև *չկա:***

1) Ա՜խ, նորից «Բարի՛ ճամփա»,
   Ա՜խ, նորից «Մնա՛ս բարով»…
   Մի տեսակ տագնապ կա, որ
   Չես ասի ոչ մի բառով:
2) Մենավո՛ր իմ սիրտ, մոլորվա՜ծ թռչուն,
   Կարոտիդ կանչը չի հասնի նրան…
3) Ուր էլ լինեմ, չեմ մոռանա ես ողբաձայն երգերը մեր…
4) Չի դավաճանում ոչ մի ժամանակ
   Հյուրընկալության հինավուրց ոճին:

13 **Նախադասություններից քանիսո՞ւմ մակբայ կա:**

- Կնոջ թափառիկ հայացքը հանդիպեց Կոմիտասի աչքերին, հետո նորից կուչ եկավ ոտքերի մոտ, և նա շարունակեց ակնկոր փնտրել կորցրածը:
- Վարագույրների բարձրանալուց հետո տեսա՝ բոլորը ոտքի են ելել և փայլող աչքերով նայում են ինձ:
- Սկսեց քայլել մինչև փողոցի շրջադարձն ու հետ՝ ուշադիր նայելով անցորդներին:
- Նամակի հետ նա աղջկան ուղարկեց նաև մի քանի անհրաժեշտ իրեր:

1) երեքում
2) ոչ մեկում
3) մեկում
4) երկուսում

14 **Ո՞ր բարդ նախադասության կազմում միակազմ նախադասություն կա:**

1) Մթնում էր, երբ մենք հասանք լեռան ձյունապատ գագաթին:
2) Եկել էր ինձ մոտ, որ գործի մանրամասները քննարկենք:
3) Խոսելը նրա սիրած զբաղմունքն է, բայց շատ է այն չարաշահում:
4) Ոչ ոք չկար. լսվում էր միայն մեղուների բզզոցը:

15 **Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը բաղադրյալ ստորոգյալ:**

1) Դանդաղ **քայլում է** ձիս հայրենի արահետներով:
2) Թաղի տղաները մի տեսակ **դժվարությամբ էին ընկերանում** միմյանց հետ:
3) Նա հորս մտերիմ **ընկերն է եղել** և գործակիցը:
4) Օրերով տնից **դուրս չէր գալիս:**

16 **Ո՞ր նախադասության մեջ գոյականով արտահայտված խնդիր կա:**

1) Ինձ պարտվելը նրա համար սովորական բան էր:
2) Փողոցի ծայրից ես մի անգամ էլ հետ նայեցի:
3) Բաժանվել էր կերակուրը, և լսվում էր գդալների չխկչխկոցը:
4) Նրա համար ընտրում են ամենաքաղցր պտուղները:

17 **Ո՞րն է տրված նախադասության գծապատկերը:**

Թվում էր, թե ահա ուր որ է կկռանա, գետնից կվերցնի մի մեծ քարի կտոր ու կշպրտի փախչողի ուղղությամբ:

1)


2)


3)


4)


18 **Տրված բարդ ստորադասական նախադասություններից որի՞ երկրորդական նախադասությունն է ենթակա:**

1) Մի՞թե արժանավորը նա չէր, ով քեզ փրկեց կործանումից:
2) Չեմ կարող մոռանալ, թե ինչպիսի տխուր ու աղերսող աչքերով էր մեզ նայում վիրավոր եղնիկը:
3) Ով քաղաքից էր հեռացել, Նա թողել էր մշուշը ծեր:
4) Ու գիտեմ հիմա՝ մի սովորական Աղջիկ էիր դու՝ նման ամենքին:

19 **Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:**

Պերսևսը աշխարհով մեկ ճանապարհորդելուց հետո գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:

1) Պերսևսը, որ գլուխը կորցրել էր, աշխարհով մեկ ճանապարհորդելուց հետո եկավ հավերժահարսերի մոտ:
2) Պերսևսը, որ ճանապարհորդեց աշխարհով մեկ, գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:
3) Պերսևսը, երբ ճանապարհորդել էր աշխարհով մեկ, գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:
4) Երբ Պերսևսը ճանապարհորդում էր աշխարհով մեկ, գլուխը կորցրած եկավ հավերժահարսերի մոտ:

20 **Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:**

- Քանի տարի էր, ինչ Թուրվանտա Քորոն և Փալանճի Գրիգորն ամուսնացած էին, բայց հակառակ բուռն ջանքերի՝ զավակ չունեցան:
- Թորիկին հետաքրքրում էր փողոցում ամեն բան. եթե արջ էին խաղացնում, դիտում էր, երբ տեսնում էր, որ մի դռան առաջ հավերը կուտ են ուտում, կանգ էր առնում ու երկար դիտում:
- Տակավին լսում էր նա երգը, և նրան, թվում էր, թե լեռնային լանջերի ծաղիկներն են երգում:
- Նրա հայացքը մի վայրկյան ընկավ լուսամուտից դուրս. մի մեղմ գիշեր էր և աստղերը մտերիմ աչքերի պես թարթում էին:
- Այնտեղ ծաղիկներ կային, չքնաղ ու բյուրազան ծաղիկներ՝ թիթեռների պես սփռված ու թրթռուն:
- Մի որբ ու աղքատ մանուկ էր ապրում այդ մարդկանց մեջ, գիշերը տեղ չուներ՝ գլուխը դնելու և հաց չուներ՝ ուտելու:

1) մեկում
2) երկուսում
3) երեքում
4) չորսում

21 **Ո՞ր հայերենով է տրված հատվածը:**

Հուր հորիզոնն մարեցավ,
Երկինքն աստղեր փթթեցան,
Համբույր մ՛առի դարձյալ ես
Հանուն աստեղց ցիրևցան:

1) արևմտահայերեն
2) միջին հայերեն
3) արևելահայերեն
4) գրաբար

22 **Ո՞ր պնդումն է սխալ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» վերաբերյալ:**

1) «Հայոց պատմությունը» Խորենացին գրել է իշխան Սահակ Բագրատունու պատվերով:
2) Հայ մատենագրության մեջ այն առաջին գրավոր հուշարձանն է, որն ընդգրկում է հայ ժողովրդի ամբողջական պատմությունը՝ նրա կազմավորումից մինչև հեղինակի ապրած ժամանակները:
3) Խորենացին իր պատմությունն ավարտել է նշանավոր «Ողբ հայրենասիրի» գլխով:
4) Հեղինակը քննական պատմություն ստեղծելու առաջին փորձն է կատարել՝ ստուգելով, ճշտելով իրեն հայտնի բոլոր փաստերը:

23 **Նշվածներից ո՞վ է Վարդան Այգեկցու ընտիր առակների մի փունջ վերածել աշխարհաբարի:**

1) Ակսել Բակունցը
2) Հովհաննես Թումանյանը
3) Հովհաննես Շիրազը
4) Ավետիք Իսահակյանը

24 **Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:**

Էն վեհ վայրկենին չընքնաղ գիշերի՝
Երկրնքի անհո՛ւն, հեռու խորքերից,
Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թրռած իրար են գալիս,
Գալի՛ս՝ կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհքից հեռո՛ւ, լազուր կամարում:

1) «Անուշ» (Հ. Թումանյան)
2) «Արա Գեղեցիկ» (Ն. Զարյան)
3) «Հավերժական սերը» (Ավ. Իսահակյան)
4) «Fatum» (Վ. Տերյան)

25 **Պնդումներից ո՞րն է ճիշտ Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության վերաբերյալ:**

1) Նրանում զարգանում է փիլիսոփայական այն խոհը, թե կյանքի ու մահվան սահմանագծից է սկիզբ առնում անմահության գաղտնիքը:
2) Հասարակությունից օտարված անհատի դրամա է, որտեղ բնության չքնաղ մի բեկորը հանդես է գալիս որպես բանաստեղծի խռովահույզ սրտի հանգրվան:
3) Բանաստեղծի վեճն է Աստծու հետ:
4) Բանաստեղծի հավատարմության երդումն է հայրենիքին:

26 **Տրվածներից ո՞րը ճիշտ չէ Դանիել Վարուժանի «Հարճը» պոեմի վերաբերյալ:**

1) Տրդատը, հրապուրվելով Բակուր իշխանի հարճ Նազենիկով, փախցնում է նրան, սակայն Բակուրը հետապնդում է նրանց և սպանում Նազենիկին:
2) Նազենիկի աճյունը Տրդատի կարգադրությամբ ամփոփում են մի չորացած բարդու տակ, որը դրանից հետո վերընձյուղվում է:
3) Տիրան արքայի փեսան՝ Տրդատ Բագրատունի իշխանը, ծեծել է կնոջը, կտրել նրա մազերը և հեռացել:
4) Սյունյաց Բակուր իշխանը, վախենալով Տիրան արքայից, դժկամությամբ է իր հարկի տակ ընդունում Տրդատ Բագրատունուն:

27 **Տողերի դասավորության ո՞ր տարբերակն է ճիշտ:**

ա. Կարծես թե սիրո քնքուշ խոսք ասաց նիրհող դաշտերին
բ. Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին
գ. Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց
դ. Արձակ դաշտերի ամայության մեջ նա մեղմ շշնջաց

1) բ, ա, դ, գ
2) դ, ա, գ, բ
3) ա, գ, դ, բ
4) դ, բ, գ, ա

28 **Եղիշե Չարենցի ո՞ր բանաստեղծությունից է մեջբերվող քառատողը:**

…Երթամ մարող ու մարմրող իրիկվա մեջ,
Որպես ուրու հալածական, որպես տեսիլ-
Տա՜մ պարանոցս կարոտին այն երկնուղեշ
Ու օրորվեմ՝ եղերական ու անբասիր…

1) «Հեռացումի խոսքեր»
2) «Մահվան տեսիլ» («Որպես լքված թավջութակի…»)
3) «Անվերնագիր» («Իմ մահվան օրը…»)
4) «Տաղ անձնական»

29 **Ձախ կողմում նշված են Ակսել Բակունցի պատմվածքները, իսկ աջում՝ դրանցից մեկական հատված. ո՞ր տարբերակի բոլոր պատասխաններն են ճիշտ:**

ա. «Մթնաձոր»
բ. «Միրհավ»
գ. «Խոնարհ աղջիկը»
դ. «Ալպիական մանուշակ»

1. «Այդ կինը երբեք բոբիկ ոտքերով չի քայլել, չի նստել մխացող աթարի առաջ»:
2. «...Նայում էի գրատախտակի թվերին, աչքերիս առաջ բրդե շալով աղջկա գլուխը, ոտքերը ձյունի մեջ և ձյունի ճերմակության վրա օձի պես սև պարանը»:
3. «Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում»:
4. «Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը»:

1) ա-3, բ-4, գ-1, դ-2
2) ա-4, բ-3, գ-2, դ-1
3) ա-3, բ-2, գ-4, դ-1
4) ա-3, բ-4, գ-2, դ-1

30 **Ո՞ր պնդումն է սխալ Շահան Շահնուրի «Նահանջը առանց երգի» վեպի վերաբերյալ:**

1) Վեպում ազգային ակունքներից նահանջի և հայապահպանության խնդիրներն արծարծված են Պիեր-Նենեթ դրամատիկ սիրավեպին համաձույլ:
2) Օտար միջավայրն ու բարքերը չեն ազդում ֆրանսիացի չդարձած Պետրոսի վրա, և նա Նենեթի մահից հետո հայերենով արտասանում է «Հայր մեր»-ը:
3) Հեղինակը դիտարկել է Ֆրանսիայում նոր-նոր ձևավորվող հայ գաղութի կյանքը:
4) Վեպում պատկերված են օտարության մեջ հայտնված հայ մարդկանց սիրո և բարոյականության խնդիրները:

31 **Պարույր Սևակի ո՞ր ստեղծագործությունից է հետևյալ հատվածը:**

Դու՝ մեր երգի Մեսրոպ Մաշտոց,
Գիրն ու տառն ես Հայոց երգի:
Հայոց երգի
Անծիր հերկի
Եվ ակոսն ու խորունկ առն ես,
Եվ մատնընտիր սերմը նրա,
Եվ խոստումը գալիք բերքի…

1) «Եռաձայն պատարագ»
2) «Մարդ էլ կա, մարդ էլ»
3) «Անլռելի զանգակատուն»
4) «Եվ այր մի՝ Մաշտոց անուն»

32 **Տրված բնորոշումներից որո՞ւմ սխալ կա:**

1) Խաչատուր Աբովյանը, Պետրոս Դուրյանը և Միքայել Նալբանդյանը 19-րդ դարի հեղինակներ են:
2) Դանիել Վարուժանը, Սիամանթոն և Նար-Դոսը արևմտահայ հեղինակներ են:
3) Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդը և Ղազար Փարպեցին 5-րդ դարի պատմիչներ են:
4) Անդրանիկ Ծառուկյանը, Մուշեղ Իշխանը և Վազգեն Շուշանյանը սփյուռքահայ գրողներ են:

33 **Տրված բառերից քանիսո՞ւմ բաց թողած տեղում պետք է գրվի *հ.***

շնոր-ք, ընդ-ատել, արհամար-անք, տարաշխար-իկ, հայ-ոյանք, հայթ-այթել, ժպիր-, խոնար-վել, հեղ-եղուկ, հեղ-եղատ:

34 **Տրված հատվածում քանի՞ որոշիչ կա:**

Սանդուղքի վրա լսվեց վերև բարձրացող ինչ-որ մարդու ոտքերի ձայնը: Իր ալեկոծ մտքերին անձնատուր՝ անաղմուկ քայլերով մտավ նախասենյակ: Անտառի զմրուխտ թավուտներից եկող զովը մի պահ հասավ իրեն, բայց թռուցիկ հայացքով նայելով անորոշ ուղղությամբ՝ նա նորից փակեց փեղկը՝ լարված սպասելով լուրի:

35 **Տրված գոյականներից քանիսի՞ հոգնակի թիվն է կազմվում *-եր* վերջավորությամբ.**

պատճեն, դաշտամուկ, ջրագիծ, հաղորդաշար, լրագիր, անասնապահ, գլխատառ, գրավատուն, դուստր, ճամփեզր, արարողակարգ, մեղվաբույծ:

36 **Քանի՞ վաղակատար ձևաբայ կա տրված նախադասության մեջ.**

Ամբողջ մի դար՝ հարյուր տարի էր ապրել Մարգարիտ տատը, և որդիներն ու դուստրերը վաղուց արդեն իրենք էին ալեզարդ պապիկներ ու տատիկներ դարձել, բայց նա դեռ ապրել էր ուզում և արարել:

37 **Տրված հատվածում քանի՞ ուղիղ խնդիր կա:**

Թե ուր գնացին Հուդային սպանած երկուսը, չիմացվեց, բայց թողնելով ծանոթ արահետը՝ նա խորացավ ձիթենիներով շրջապատված տարածքը՝ քսակի ոսկիները շպրտելով իր շուրջը հայտնվող մուրացիկներին, ձեռքի դողացող ափերը անցորդներին ուղղած:

38 **Պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սը *չեն* գործածվել.**

մակդիր, համեմատություն, հանգավորում, փոխաբերություն, չափազանցություն:

Հոգ չէ, որ մեր օրերն անցան տենդի պես,
Կյանքը դարձավ անմխիթար զառանցանք.
-Մենք կժպտանք, գոհ կժպտանք մեռնելիս,
Որ երազում երազեցինք ու անցանք…

39 **Նշել այն բառերի համարները, որոնցում ձայնավորի սղում կա.**

1. զինամթերք, 2. հնանալ, 3. մաքրակենցաղ, 4. լուսավոր, 5. փոքրիկ, 6. պատանյակ, 7. բացառիկ, 8. ձեղնահարկ, 9. առաջնային:

40 **Նշել այն բառերի համարները, որոնք կազմությամբ պարզ են.**

1. հրաման, 2. խցան, 3. ազդու, 4. քնքուշ, 5. վարք, 6. լուսին, 7. հրապարակ, 8. աշխարհ, 9. ձգան:

41 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում անկախ դերբայ կա:**

1. Սևադան սրդողած պատմեց, որ հաղթանակից հետո թագավորն իջել էր Սևորդյաց ձորը:
2. Լեռնալանջերի ճերմակաթույր ձյունը հալվել էր, սարերն առաջվա նման ամպրոպներին չէին արձագանքում:
3. Իտալիայի կառավարությունը հապշտապ դիմեց աշխարհի բոլոր մասնագետներին՝ մասնակցելու աշտարակի փրկության գործին:
4. Թեքությունն այնքան զգալի է, որ մարդ ինքնապաշտպանական բնազդով հետ է քաշվում:
5. Առաջին հայացքից կարծես թե հանցանքը մատնող որևէ նշան չկար:
6. Նա մանրազնին ուսումնասիրել է այդ ջրառատ գետը և հայտնաբերել մի հոյակապ ջրվեժ, որը կոչվեց Վիկտորիա՝ ի պատիվ Անգլիայի թագուհու:

42 **Նշել նախադասության շարահյուսական վերլուծության սխալ տարբերակների համարները:**

Գարդմանա իշխանը՝ Սևադան, խորազնին հայացքը ուղղեց իր հոգու ներսը, որպեսզի այնտեղ փնտրի Մարզպետունու խորհրդավոր ակնարկի պատասխանը, սակայն ավելի վայելուչ համարեց լռելը:

1. **իր** – հատկացուցիչ, **հոգու ներսը** – տեղի պարագա
2. **խորհրդավոր** – որոշիչ, **պատասխանը** - ենթակա
3. **ակնարկի** – հատկացուցիչ, **լռելը** – ուղիղ խնդիր
4. **Սևադան** - բացահայտիչ, **խորազնին** – ձևի պարագա
5. **որպեսզի** – նպատակի պարագա, **փնտրի** – պարզ ստորոգյալ

43 **Նշել այն նախադասությունների համարները, որոնցում *և*-ից առաջ ստորակետ պետք է դրվի:**

1.Նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում անպարփակ վիշտը հոգու մեջ և ցավակից եղավ անօգ մարդուն: 2. Առավ նրան իր սրտի մեջ իմացավ աշխարհի բոլոր ծայրերում էլ վիշտը մեկ է և սերը մեկ: 3. Նա հյուսեց բոլորի համար իր երգը եղավ այլևայլ երկրներում և մի օր վսեմափայլ երգիչը հոգնաբեկ վերադարձավ հայրենի տուն: 4. Երգի մրմունջով ելավ Արագածի գագաթը լուսահորդ ու ճերմակափառ և ընկողմանեց թույրիթույր ծաղիկների մեջ: 5. Ճախրում էին ծիածանաթև հավքերի երամները վերը երկնի լազուրում և միմյանց ձայն էին տալիս հոգեթրթիռ դայլայլով: 6. Ներքևում նա տեսավ քաղաքներ շեներ և լսեց հայաբառ չնաշխարհիկ երգը հերկվորի:

44 **Նշել այն շարքերի համարները, որոնցում միայն բանաստեղծական ժողովածուների կամ շարքերի վերնագրեր են:**

1. «Ցեղին սիրտը», «Նոր տաղեր», «Վերադարձ»
2. «Հացին երգը», «Ոսկի հեքիաթ», «Մարդը ափի մեջ»
3. «Ծիածան», «Հուշարձան մայրիկիս», «Մթնաձոր»
4. «Գարնանամուտ», «Տաղարան», «Մթնշաղի անուրջներ»

45 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. Ոչ բոլոր բազմավանկ բառերի հոգնակին է կազմվում ***ներ*** վերջավորությամբ:
2. ***Անդեր, Կարպատներ, Հիմալայներ, Ալպեր*** անունները անեզական գոյականներ են:
3. *Մարդ* գոյականի հոգնակին կազմվում է երկու ձևով՝ ***մարդիկ*** և ***մարդեր:***
4. Բոլոր միավանկ բառերի հոգնակին կազմվում է ***եր*** վերջավորությամբ:
5. ***Տիկին, պարոն, անձ*** բառերը հոգնակին կազմում են երկու ձևով:
6. Այն գոյականները, որոնք չունեն եզակի թիվ, կոչվում են անհոգնական գոյականներ:

Բ մակարդակ

46 **Բառերից քանիսո՞ւմ է գրվում *ը*.**

մակ-նթացություն, կոր-նթարդ, ինքն-ստինքյան, հոտ-նկայս, գիրկ-նդխառն, երկ-նտրանք, լուս-նկա, խոչ-նդոտ, առ-նչվել, առ-նթեր:

1) յոթում
2) վեցում
3) իններում
4) ութում

47 **Ո՞ր շարքի ոչ մի բառում գաղտնավանկ *չկա:***

1) ծաղկման, աննկատելի, ակնահաճո
2) առանցք, ջերմաչափ, ունկնդիր
3) կարծր, ըմբոստ, ընկերական
4) չարչարանք, երփներանգ, ծանրամարտ

48 **Ո՞ր շարքի բոլոր բառերում ձայնավորի կամ երկհնչյունի սղում կա.**

1) ոճրագործ, բուրավետ, երկրաչափություն, վրեժխնդրություն
2) դեղնակտուց, ակնոցավոր, մարդկություն, կցակառույց
3) կապտաթույր, պատրանք, աստղաբույլ, ձանձրույթ
4) պատմական, բարենպաստ, դյուցազներգություն, գործնական

49 **Ո՞ր շարքի բոլոր բառակապակցություններն ունեն դարձվածային իմաստ:**

1) գլխին կոտրել, գիրք գրել, հին երգը երգել
2) ձեռքը վնասել, կապը կտրել, սանձը քաշել
3) ձեռքն ընկնել, սիրտն առնել, բռան մեջ հավաքել
4) ջրի երես դուրս գալ, բերանը փակել, սայլ նստել

50 **Ո՞ր դարձվածքի բացատրությունն է սխալ:**

1) ***ձեռքը բռնել*** - արգելել
2) ***ջուրը գցել*** - անօգուտ վատնել
3) ***մի սանրի կտավ*** - միևնույն գործին նվիրված
4) ***հոգու աչքեր*** - ներզգացողություն

51 **Տրված բառերի բառակազմական վերլուծություններից ո՞րն է սխալ.**

1) վայելչագրություն = վայել+(ու)չ+ ա+ գ(ի)ր+ություն
2) կառամատույց = կառ+ ա+ մատ+ույց
3) խորհրդակցություն = խորհ+(ու)րդ+ ա+կ(ի)ց+ություն
4) ապերջանիկ= ապ+ երջան+ իկ

52 **Ո՞ր շարքում միայն մեկ ածանց ունեցող բառ կա:**

1) անառիկ, անենթակա, թռչուն, անկարևոր
2) անասուն, անզգայուն, անընդհատ, անիրական
3) անգիտակ, ներկայություն, անձավային, անդադրում
4) անհաճո, անհամահունչ, անցումային, անհագուրդ

53 **Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *ա* ներքին հոլովման:**

1) ձյուն, մանկություն, մահ, ուղղանկյուն
2) աշուն, արյուն, անկյուն, գրատպություն
3) տեղանուն, գրատուն, հեռագրասյուն, հարություն
4) գրություն, ջրշուն, գարուն, գինետուն

54 **Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդի գործածություն կա:**

1) Սիրում եմ աչքերիդ տխրությունը խորին….
2) Այցս ապարդյուն էր. այդպես էլ չհաշտվեցինք:
3) Միամիտդ դարձար բանսարկուների ձեռքին խաղալիք:
4) Աշխարքս մե փանջարա է,- թաղերումեն բեզարիլ իմ….

55 **Հատվածներից քանիսո՞ւմ սոսկածանցավոր բայ կա:**

- Եվ ձորերում դառն ու անհուն
  Կորցնեի տոհմ ու անուն
  Ու կորչեի ես...
- Քառասուն տարի բռնած ճանապարհ՝
  Շիտակ, անվեհեր
  Գնում եմ ես վեր:
- Էլ սիրտս ինչպե՞ս բախտավոր մնար,
  Թե ինքը իրեն բացել չիմանար...
- Կացինս թողած կաղնու փչակում,
  Պարանս ժայռի փեշերին թողած...

1) երեքում
2) չորսում
3) մեկում
4) երկուսում

56 **Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:**

1) Հենց գարունը բացվի, կտեղափոխվենք:
2) Չնայած սառնամանիքին՝ մրցումները չէին դադարել:
3) Հենց այդ գյուղն է մեր որոնածը:
4) Այնպես էին խառնել ամեն ինչ՝ սատանան իսկ գլուխ չէր հանի:

57 **Ո՞ր նախադասությունն է բարդ:**

1) Որպես հմուտ խոհարարի՝ եղբորս հրավիրում էին՝ մեծ խնջույքների, հարսանիքների պատրաստություն տեսնելու:
2) Աշուն է, այգում՝ տերևաթափ:
3) Ես, նստածներին շնորհակալություն հայտնելով, դուրս գնացի:
4) Ըստ ամենուրեք փակցված ազդագրերի՝ համերգը տեղի է ունենալու ամսի 25-ին:

58 **Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):**

1) Առվակների ոլորքով կանգնած բարդիները մեղմ օրորվում էին ինչպես խմբապարի հավաքված աղջիկներ:
2) Նրա իմ վաղեմի ծանոթի հետ իջևանել էի երկրաբանների վրանում:
3) Շեներն ու գյուղակներն իրար միացնող խճողված ճանապարհների հազիվ ընդգծված եզրերին քամին կուտակել էր ծիածանի բոլոր գույները:
4) Ականավոր լեզվաբան Մանուկ Աբեղյանը ծնվել է 1865 թվին Նախիջևանի Աստապատ գյուղում:

59 **Պատասխանների ո՞ր տարբերակում են ճիշտ նշված բարդ նախադասությունների ստորադաս նախադասությունների պաշտոնները:**

1. Թեև հագին ռազմական հանդերձանք էր, սակայն դա բնավ չէր նսեմացրել նրա կանացի թովչանքը:
2. Թե հնար լիներ գտնել ձեռագիր մատյանների և մեղեդու գունային համապատասխանությունը, կստանայինք նրբահյուս մանրանկարների և զարդերի ձայնաշարեր:
3. Նա պարզ տեսնում էր, որ իր հրապույրը մարդկանց աչքում պայմանավորված է մեծ մասամբ իր հարստությամբ:
4. Հենց ծնողների ցանկությունն էլ այն էր, որ նա մոռանար արտասահմանում կրթությունը շարունակելու մասին:

ա. պայմանի պարագա
բ. ժամանակի պարագա
գ. ուղիղ խնդիր
դ. ստորոգելի
ե. զիջման պարագա

1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-գ
2) 1-ե, 2-ա, 3-գ, 4-դ
3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-դ

60 **Տրված բարդ ստորադասական նախադասություններից ո՞րն է ճիշտ փոխակերպված պարզի:**

1) *Նրան պառկեցրին, որ մի քիչ հանգստանա, հետո ճանապարհ գցեցին:*
   Նրան պառկեցրին՝ մի քիչ հանգստացնելու և հետո ճանապարհ գցելու համար:
2) *Եթե մի քիչ ավելի հեռու լիներ, նրա շարժումները չէին երևա:*
   Մի քիչ ավելի հեռու լինելով՝ նրա շարժումները չէին երևա:
3) *Նրա երազանքն այն էր, որ դասերը թողնի ու գյուղ վերադառնա:*
   Դասերը թողնելն ու գյուղ վերադառնալը նրա երազանքն էր:
4) *Սարերում այնքան լուռ է, որ շշուկը մի կիլոմետր հեռավորությունից անգամ լսվում է:*
   Սարերում շշուկը մի կիլոմետր հեռավորությունից անգամ լսվելու չափ լուռ է:

61 **Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):**

1) Նախկին ձիանոցը տան անդամների կողմից օգտագործվում էր որպես մառան:
2) Որ նրանք հայ լինեն ես իմ հայությունից կհրաժարվեմ հայը հող կվարի ծառ կտնկի շալակով փայտ կբերի:
3) Արևի շողերի միջից երևում էր կանաչով պատված բլուրը իսկ բլրի հետևում արտերն էին:
4) Իր բախտին ու բեռանը հնազանդ նա դանդաղ բարձրանում էր նեղ արահետով:

62 **Բանաստեղծական նշված ժողովածուներից որը ո՞ւմն է**:

ա. «Հեթանոս երգեր»	1. Գրիգոր Զոհրապ
բ. «Լուռ ցավեր»	2. Ավետիք Իսահակյան
գ. «Երգեր ու վերքեր»	3. Համո Սահյան
դ. «Որոտանի եզերքին»	4. Դանիել Վարուժան

1) ա-2, բ-1, գ-3, դ-4
2) ա-4, բ-1, գ-2, դ-3
3) ա-3, բ-1, գ-2, դ-4
4) ա-4, բ-2, գ-1, դ-3

63 **Տրված հատվածը ո՞ր ստեղծագործությունից է:**

«Մի պատկեր կար, որ երևակայության մեջ ամբողջացնում էր նա… Դա իր մեղքն էր, ցածությունը, իր անգթությունը: Եվ ինչքան երկար նայում էր այդ դիակին, այնքան կսկծում էր սիրտը, և այնքան էլ հաճույք, հանգիստ էր զգում: Անդամալույծը դառավ մի սուրբ, մի պաշտելի սուրբ նրա համար: Նրա դիակը սրբագործում էր ծերուկի մեղսալից սիրտը»:

1) «Մթնաձոր», Ակսել Բակունց
2) «Համբերանքի չիբուխը», Ավետիք Իսահակյան
3) «Քառս», Ալեքսանդր Շիրվանզադե
4) «Ավելորդը», Դերենիկ Դեմիրճյան

64 **Բառերից քանիսի՞ առաջին արմատն է միավանկ.**

գարեջուր, ուխտադրուժ, ուսանող, սրբազան, մարդասպան, ձվաձև, նենգադավ, հպանցիկ, վարդաբույր, գրադարան, թիավարել, բարձրաշխարհիկ:

65 **Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են պարագա:**

Տարածեց ձեռքը իշխանը **փութով,**
Լռեց դահլիճը պերճ ապարանքի,
Պատվիրակները պատմեցին **վշտով**
Թշվառ վիճակը մայր հայրենիքի:
Զայրացավ հոգին քաջ զորավարի,
Համհարզները իր **սաստիկ** զայրացան,
Առավ ընկերներին հին կռիվների,
Եվ **հողը** հայրենի թողին, հեռացան:
Գնացին նրանք. **սահմանը չանցած՝**
Շինականն արտից առավ մի բուռ հող,
Լցրեց քսակը և **արագընթաց**
Հասավ իշխանի ապարանքը ճոխ:
Հին հայրենիքի մեղեդիները հին
Մեղմ կարկաչեցին **առվակների պես,**
Գուսանը վառման երգեց **սրտագին**
Ճերմակ լեռների կատարները վես:
Աչքերը լցված սրտի **արցունքով՝**
Խոնարհում է հեզ գլուխն արքենի,
Եվ **երեք անգամ** անհուն կարոտով
Համբուրում է նա հողը հայրենի:

66 **Պնդումներից քանի՞սն են ճիշտ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ:**

- Աշոտ Երկաթի վարձկան եգերացիները վճռական պահերին միշտ նրա կողքին էին:
- Սահակ Սևադայի որդիները քաջաբար զոհվում են Դվինի մատույցներում:
- Հովհաննես կաթողիկոսը փորձում է հաշտեցնել արքային և Սահակ Սևադային:
- Մարտի թեժ պահին, երբ զորքն անձնվիրաբար պաշտպանում է Բյուրականի ամրոցը, կաթողիկոսը գաղտնի հեռանում է:

67 **Նշել այն բառերի համարները, որոնցում նախածանց կա.**

1. անագ, 2. անիմաստ, 3. անդրաշխարհ, 4. վերադարձ, 5. տհաս, 6. նախնադար, 7. հակամետ, 8. մակագիր, 9. անթացուպ:

68 **Նշել այն տարբերակների համարները, որոնցում նախադասության անդամների ձևաբանական վերլուծության սխալ** ***չկա:***

Մի քանի անգամ փորձեցի խոսել հետը՝ գիտենալու համար՝ արդյոք հա՞մր է, բայց նա աչքերը չռում էր, նայում էր երեսիս ապուշի պես, ապա ժպտում էր և նորից գլուխը կրծքին թեքում:

1. **բայց** – համադասական շաղկապ, **պես** – կապ, հետադրություն
2. **նորից** – մակբայ, **նայում էր** - անկատար անցյալ, ներգործական սեռ
3. **մի քանի** – որոշյալ դերանուն, **խոսել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ
4. **գիտենալու** - ապակատար դերբայ, ածանցավոր, **համար** – կապ, հետադրություն
5. **արդյոք** – վերաբերական, **թեքում էր** – սահմանական եղանակ, չեզոք սեռ

69 **Մտքերից քանի՞սն են հակասում շարադրանքի (տեքստի) բովանդակությանը:**

Մարդն իր ամբողջ կյանքի ընթացքում ունենում է 52 ատամ, որոնցից քսանը աճում և ընկնում են մանկական տարիքում: Ատամների բարձրությունը տատանվում է 1,75 սմ-ից (մեծ սեղանատամ) մինչև 2.7 սմ (ժանիքներ): Տարեց մարդու բոլոր 32 ատամները մի գծով շարելու դեպքում կստացվի 70 սմ-անոց շարան: Մարդու ծնոտի սեղմման ուժը կարող է հասնել մինչև 80 կգ-ի (1 քառ. սմ-ի վրա): Կծելու ուժգնության ռեկորդը պատկանում է մի ամերիկացու, որը գիտափորձի ժամանակ կարողացել է 1 քառ. սմ-ի վրա դրսևորել 442 կգ սեղմման ուժ: Վերջին ժամանակներում ավելի հաճախ է պատահում, երբ իմաստության ատամները ուղղակի չեն աճում կամ լինդը ճեղքել չեն կարողանում, այսինքն՝ մարդու ատամների քանակը նվազման է գնում՝ հասնելով 28-ի: Դա կապված է կերակրի հետ, որը գնալով դառնում է ավելի փափուկ և դյուրածամ, իսկ նախամարդու ծնոտի չափը վաղուց հեռավոր հիշողություն է դարձել:

- Տարբեր մարդկանց ատամնաշարի սեղմման ուժը տարբեր է, և կծելու ուժգնության ռեկորդը պատկանում է մի ամերիկացու, որը գիտափորձի ժամանակ կարողացել է 1 քառ. սմ-ի վրա դրսևորել 442 կգ սեղմման ուժ:
- Հասուն մարդու ատամնաշարն ունի հիսուներկու ատամ, որոնց բարձրությունը տատանվում է 1,75 սմ-ից մինչև 2,7 սմ:
- Բավարար վիճակում գտնվող մարսողական համակարգ ունեցող մարդկանց իմաստության ատամները հաճախ դուրս չեն գալիս:
- Եթե մարդու երեսուներկու ատամները կշռեն, կստացվի չորս հարյուր քառասուներկու գրամանոց և յոթանասուն սանտիմետրանոց շարան:

70 **Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրի՛ր Ճիշտ է, Սխալ է, Չգիտեմ տարբերակներից որևէ մեկը:**

1. ***Ն*** և ***չ*** սոսկածանցները անցյալ կատարյալի կազմության ժամանակ ընկնում են:
2. ***Անն*** և ***են*** սոսկածանցավոր բայերը ինչպես ***ա***, այնպես էլ ***ե*** խոնարհման են:
3. ***Ե*** խոնարհման բոլոր բայերը եզակի հրամայականում ստանում են ***իր*** վերջավորություն:
4. Բայի բաղադրյալ դիմավոր ժամանակաձևեր ունի միայն սահմանական եղանակը:
5. Ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների բոլոր ժամանակաձևերը պարզ են:
6. Սահմանական, ըղձական և ենթադրական եղանակների ժխտականը կազմվում է դրական ձևերին ***չ*** մասնիկ ավելացնելով: